

ջարկէ իրեն. «Ահա ազգս Հայոց մեծ եւ փոքր երեսս դարձուցին յինէն եւ զքեզ սիրեն եւ ընդունին, եւ մանաւանդ զի ծերացեալ եմ եւ հարկն արքունի պարտք եղեւ եւ բաղմացաւ ի վերայ իմ. արդ տամ քեզ զսուրբ Աթոռն Էջմիածնի եւ զկաթողիկոսութիւնն. զու վարեաւ այսուհետեւ զկաթողիկոսութիւնն, որպէս եւ եսդ արժանի. եւ ինձ տուր ամ յամէ դարման պիտոյից եւ զմի ի վանօրէիցդ, զի անդ նստայց լուելայն եւ վճարեցից զծերութիւնս իմ»² :

Առաջարկութիւնը առանց տարակուսի մօտ էր թէ Մովսէս վարդապետի եւ թէ բովանդակ Ազգին սրտին. եւ այս էր ամէնուն ալ վաղեմի խորհուրդը: Բայց համոզուած չէր Մովսէս բաղմահնար ծերին անկեղծութեան. գիտէր թէ պարտքերը չալակելով իր ուսին՝ պիտի կորզէր դարձեալ իշխանութիւնը յինքն: Այս պատճառաւ ալ «հրաժարելով հրաժարեցաւ» յանձն առնել կաթողիկոսութիւնը այնպիսի աննպաստ պարագաներու մէջ:

Բայց գտնուեցաւ խելակորոյս մը, որ մղուած փառասիրութենէն եւ կուրացած նախանձէն, նետեց ինք զինքը այնպիսի վտանգի մէջ:

² Այս միջոցին վախճանած էր ի Վիրս Աւետիք կաթողիկոս. Դաւիթ քաչուած էր հրապարակէն. առանձին մնացած էր Մելքիսեղեկ՝ ծանրաբեռնուած տարիքով եւ պարտքերով. կը կարօտէր օգնականի. ուստի աւելի աթոռակցութեան քան կաթողիկոսութենէն հրաժարելու մասին էր խօսքը: